

է . կուրծքն ու փորը դեղին՝ սև սև բծերով . գլուխն ու կունակը սև : Լըռուն էգէն ասով կըտարբերի որ ճերմակ փետուրէ կատարք մը ունի , ու գլուխը աւելի մեծ է . ձայնը սոխակի ձայնին շատ կընմանի : Լսիկայ ընտանեցւոնէն ու մեծցընելը խիստ դժար է : Լս սիրուն թռչունին ստորագրութիւնը լմընցընենք գեղեցիկ պատմութեամբ մը որ հիմակուան երևելի մատենագիրներէն մէկը կը պատմէ , բնական գլուխէն՝ ու աստուածային նախախնամութեւն շատ աղէկ օրինակ :

Վեղի մը մէջ երկու աշխատաւոր դրացիներ կային , երկուքն ալ տղոց տէր . մէկը անդադար մտմտութեւ կը նէր , թէ ես հիւընդնամ կամ մեռնիմ՝ նէ՛ տղաքս ո՞վ պիտի հոգայ . աս հոգը սրտին որդ մը եղած էր : Իր դրացիին մտքէն ալ կանցնէր աս մըտմտութիւնը , բայց անիկայ խելքով կը մտածէր թէ Լստուած որ կըհոգայ իր ստեղծուածները , անշուշտ զիս ալ իմ տղաքս ալ ձեռքէ չթողուր . ասով իր սիրտը միշտ ուրախ էր : Լսբոր օր մը մէկալ գեղացին տրտում տխուր կաշխատէր իր արտին մէջ , տեսաւ որ երկու արտուտ մացառներուն մէջ կըմտնեն ու կելլեն . մօտ գնաց , նայեցաւ տեսաւ որ երկու բոյն կայ քովէ քով , երկուքին մէջ ալ շատ մը նոր հակըթէն ելած ձագեր , որ դեռ փետուր ալ չունին : Վարձաւ գեղացին իր աշխատանքին , ու ատեն ատեն կըդառնար կընայէր արտուտներուն որ անդադար կերակուր կը բերէին իրենց ձագերուն : Լեյմալ յանկարծ ուրուր մը կիջնայ ան կերակուր բերող արտուտներէն մէկուն վրայ , կըզարնէ ճանկը , կառնէ կըտանի խեղճը : Վեղացիին սիրտը կը կտրտի աս բանիս վրայ . անշուշտ հիմա պիտի կորսուին կըսէ ան ձագերը առանց մօր . ես ալ մեռնիմ՝ նէ պսպէս պիտի ըլլայ ուրեմն իմ զաւկընքուս : Լս մտմտութեւ ան օրը աւելի անհանգիստ կանցընէ , գիշերն

ալ չկրնար քնանալ : Լսկորորդ օրը արտերթալու ատենը՝ « Լսթամնայիմ կըսէ , ան խեղճ ձագերը ինչ եղան . անտարակոյս շատը մեռած են » : Լստենայ տեսնէ որ ողջ առողջ ու զուարթ են , կըզարմանայ կըմնայ մարդը . աս բանիս սլատճառը իմանալ ուզելով կըպահուէր քիչ մը ատեն կըկենայ , մէյմալ տեսնէ որ երկորորդ բոյնին մայրը՝ իր ձագերէն ետքը ան խեղճ որբերուն ալ կերակուր կըբերէ : Լն ատենը կըզմայլի աստուածային նախախնամութեանը վրայ , ու իրիկունը կերթայ իր դրացիին ալ կըպատմէ տեսածը : Լսաքինին կըդառնայ , « Լնչո՛ւ փուճ տեղը անհանգիստ կընես զքեզ , եղբայր , կըսէ . Լստուած իր արարածները ձեռքէ չթողուր . Լստուածոյ սիրոյն մեր խելքը չհասնիր : Թէ որ ես քեզմէ առաջ մեռնիմ , դուն իմ զաւկընքուս հայր եղիր . թէ որ դու մեռնիս , ես քուկիննե՛րուդ հայրութիւն կընեմ . իսկ թէ որ դեռ տղաքնիս չափահաս չեղած՝ երկուքնիս մէկտեղ մեռնինք , գիտնանք որ երկինքը հայր մը կայ , որ մեզմէ լաւ կըհոգայ զանոնք » :

Սարեկին ու տորդիկին վրայ ուրիշ անգամ կըխօսին :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Լսրիւ ամառն մէջ երկրագործին ու պարտիպանին ընելիքը :

ՏԱՐԻՈՅՆ աս չորրորդ ամսուն մէջ բնութիւնը կըզուարթանայ , ու երկրագործին նոր նոր աշխատանքներ կըբանայ : Լնցեալ ամսէն մնացածները հիմա ընելէն զատ , ինչպէս է գարնան ընդեղէնները՝ վարսակն ու գարին ցանել , սէտք է ցանել նաև մարացորեն , ձիակորեակ , առուոյտ և այլն . արտերուն մէջի գէշ խոտերը

խելու, ջուր կոխած տեղուանքն ալ դարմանելու է, և պէտք չէ թողուլ որ ձիերն ու կովերը անոնց մէջ արածին: Եւ ամսուս մէջ կրցանուի ըստեպդին, սոխ, շողգամ, բողկ, ոլոռ ու բակլայ, նեխուր՝, բազուկ, եղերդ, լուբիա, ճակնդեղ, շոմին, ամառուան հազար, ու ծնեբեկ:

Չմեռուան մէջ չփրտտող բոյսերուն արմատները բաժնելու է որ շատնան. պտղատու ծառերուն կուտերն ալ թաղելու է, ինչպէս է նուշը, ընկոյզը, դեղձը և այլն, որպէս զի մկները չլատցած՝ ասոնք ծլին: Եւ ամսուս բարեխառնութենէն ու անձրեւի շատ կամ քիչ ըլլալէն կրկախուի աշնան բերքին առատութիւնը: Արովհետեւ աս ամսուս մէջի անձրեւներովը երկիրը շատ կը ջրոտի, անոր համար բոյսերը ջրի կարօտ չեն. բայց նոր տնկած ծառերդ կրնաս ջրել. իսկ թէ որ ցամաքութիւն է, ան աւտեն թէ հունտերուն և թէ բոյսերուն պէտք է ջուր տալ:

(Ժ) Եր օդերը ցուրտ երթան, դեղձըն ու ծիրանը ցրտէն պաշտպանելու է՝ յարդէ ծածք շինելով: Եւ այելու է որ քանի որ աս ամիսը չէ անցած՝ որթներն ու ծառերը յօտուին. ամսուս վերջերը որթն ու թուր պատուաստելու է: Եւ ցաւնոցները մաքրելու, մեղուանոցները կարգաւորելու է. ձմեռուան մէջ մանած կանեփը մոխրաջրի դնելու է. հաւերը, սագերն ու բադերը թխսի դնելու է. կենդանիներն ալ ախոռէն հանելու ու չմշակուած արտի մէջ արձակ թողլու է:

(Ի) Կողիկ մեծցնողը թէ որ օտար երկրի բոյսեր ունի՝ անոնց հունտը պէտք է ցանէ: Արդերուն և ուրիշ բոյսերուն վրայ եղած որդերը ջարդէ, որ ձագ հանելով չլատնան. մեխակն՝ ու յասմիկը տաշտաթաղ՝ ընէ, և փշրած ու հողի հետ խառնած աղբով դարմանէ. գունաւոր ծաղ-

կըները անձրեւէ ու արեւէ պահէ. մեխակին քովը խեչակներ տնկէ, ու սեզով կապէ որ շիտակ մեծնան:

ԱՐՈՒԵՍ

Հայր շինելու էրպէ:

ՀԱՅԼԻԻՆ գիւտը շատ հին է, և Պլինիոսի պատմածին նայելով՝ առջի ապակիէ հայրն սիգոնացիք շիներ են: Արմնոյ մը երեսին մաքրութիւնը կամ թափանցկութիւնը բաւական չէ պատկերը ցուցնելու, հապա փայլունութեանը հետ պէտք է որ դիմահար մարմին ըլլայ, որ լուսոյ ճառագայթները վրան զարնելով՝ անկէ ետ դառնան: Ինչպէս ապակիէ թիթեղ մը թէպէտ և փայլուն մաքուր ու թափանցիկ է, բայց մէջը կերպարանքդ չես տեսներ. վասն զի անոր վրայ զարկած ճառագայթները մէջէն կանցնին ու կրկորսուին. իսկ թէ որ աս ապակիին մէկ երեսը սև ներկես, մէջը աւելի աղէկ կը տեսնես դէմքդ. վասն զի ասով լուսոյ ճառագայթները աւելի կը ցոլանան հայրին վրայէն, անով առարկաներուն պատկերն ալ կը տեսնուի:

Շինելը ապակին դիմահար ընելու համար՝ անոր մէկ երեսը մթնագոյն ներկ մը կը քսէին. ետքը սև ներկին տեղը մտածեցին որ կապար գործածեն. էն վերջը ամէնէն աղէկ ու յարմար սեպեցին ամալկամ գործածել, որ սնդիկէ ու անագէ շինած բաղադրութիւն է: Եւ շի մանակները նաև մետաղէ հայրներ կը շինէին, այս ինքն արծաթէ, անագէ, կապարէ, և ասոնց այլեւայլ բաղադրութենէն. իսկ հիմա միայն պողպատէ ու փլաթինէ հայր կը շինուի, և կը գործածուի միայն բնաբանական և աստղաբաշխական գործիքներու համար:

Երկայն տուն Եւրոպայի շատ կող-